ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE36-2E84-4CF3-BB34 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1917/02/26 ք. Երևան
12 Մարտ 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ՀՀ ներքին գործերի նախարարի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի «Էնիգմա տեղեկատվության պաշտպանության համակարգեր» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից հայտարարված թիվ «ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք ՀՀ ներքին գործերի նախարարությանը նոր ընթացակարգ հայտարարել պարտավորեցնելու պահանջի մասին:

ՀՀ ներքին գործերի նախարարի կողմից 11.03.2026թ. ժամը 16:55-ին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ գնման գործընթացի կասեցումը

վերացնելու մասին, որով նշել է, որ ԵԴ2/1917/02/26 քաղաքացիական գործը 04.03.2026թ. ընդունվել է վարույթ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի ուժով գնման գործընթացը կասեցվել է մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Այնուհետև վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 234.6-րդ հոդվածի 5-րդ մասը նշվել է, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ՆԳՆ կարիքների համար էլեկտրոնային ձեռնաշղթաների ձեռքբերման նպատակով և 10.02.2026թ. https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակվել է «ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշումն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված անհետաձգելի միջամտության որոշումների կատարումն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 10.07.2025թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 17.11.2023թ. թիվ 1986-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին թիվ 913-Ն որոշման 1-ին կետով լրացվող 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 17.11.2023թ. թիվ 1986-Ն որոշումը գործողության մեջ է դրվում 2026 թվականի մարտի 1-ից:

Այսինքն՝ արդեն իսկ 2026 թվականի մարտի 1-ից գործողության մեջ է դրվել էլեկտրոնային հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ իրավակարգավորումը, սակայն հայտարարված գնման գործընթացի կասեցման արդյունքում հնարավոր չի լինում ապահովել օրենքի պահանջի կատարումը:

Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումն անհրաժեշտ է ընտանիքում բռնության հնարավոր դեպքերի նվազեցման (հատկապես՝ բռնության կրկնման կանխման) նպատակով: Անհրաժեշտ է նկատի ունենալով նաև այն, որ բռնության ենթարկված անձանց շրջանում մեծ թիվ են կազմում կանայք ու երեխաները, և ՀՀ ներքին գործերի նախարարությունն ոստիկանությունն ունի վերջիններիս կյանքի, առողջության և իրավունքների պաշտպանությունն ապահովելու պարտականություն:

Ուստի, հանրային շահից ելնելով, միջնորդում եմ՝ վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ ապահովելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների արդյունավետ աշխատանքը՝ ի նպաստ հասարակության անվտանգության և հանրության (մարդու) իրավունքների պաշտպանության:

Միևնույն ժամանակ, գնման գործընթացը կասեցված լինելու պարագայում կխաթարվի «Գնումների մասին» օրենքի հիմնական նպատակներից մեկը, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Արդյունքում, հանրային շահից ելնելով, միջնորդել է վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ ապահովելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների արդյունավետ աշխատանքը՝ ի նպաստ հասարակության անվտանգության և հանրության (հատկապես՝ կանանց և երեխաների) իրավունքների պաշտպանության:

Հայցվորի ներկայացուցիչը 11.03.2026թ. ժամը 20:20-ին առարկություն է ներկայացրել քննարկվող միջնորդության դեմ՝ նշելով, որ միջնորդության մեջ նշվում է՝ <<ՀՀ կառավարության 10.07.2025թ. ՀՀ կառավարության 17.11.2023թ. թիվ 1986-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 913-Ն որոշման 1-ին կետով լրացվող 3-րդ կետը, որի համաձայն՝ ՀՀ կառավարության 17.11.2023թ. թիվ 1986-Ն որոշումը գործողության մեջ է դրվում 2026 թվականի մարտի 1-ից: Այսինքն՝ արդեն իսկ 2026 թվականի մարտի 1-ից գործողության մեջ է դրվել էլեկտրոնային հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ իրավակարգավորումը, սակայն հայտարարված գնման գործընթացի կասեցման արդյունքում հնարավոր չի լինում ապահովել օրենքի պահանջի կատարումը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ էլեկտրոնային հսկողության սարքերի գնման կարիքը, ըստ էության, Պատասխանողի մոտ ծագել է դեռ 2025թ. հուլիսի 10-ին, սակայն Պատասխանողը չի նախաձեռնել որևէ գործողություն գնման գործընթաց իրականացնելու համար, այլ անհայտ պատճառներով սպասել է մինչև 2026թ. փետրվարի 10-ը և միայն այդ ժամանակ է հրապարակել գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը: Ընդ որում, նույնիսկ սույն թվականի փետրվարի 10-ին հայտարարության և հրավերի հրապարակված լինելու պարագայում հնարավոր չէր սույն ընթացակարգի շրջանակներում գնման առարկա հանդիսացող ապրանքները ձեռք բերել մինչև սույն թվականի մարտի 1-ը, քանի որ Հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 23.02.2026 թվականը:

Եթե նույնիսկ պատկերացնենք, որ հայտերի գնահատումն իրականացվելու էր հայտերի բացման հաջորդ օրը՝ 24.02.2026թ. և նույն օրն էլ ճանաչվելու էր ընտրված մասնակիցը, ապա <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումների համաձայն առնվազն մինչև հաջորդ օրը՝ 25.02.2026թ. պատվիրատուն պետք է հրապարակեր պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և սահմաներ անգործության ժամկետ՝ առնվազն մինչև 07.03.2026թ.: Հաշվի առնելով նաև այն, որ սույն ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմաններին համաձայն, ապա նույնիսկ 08.03.2026թ. ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու պարագայում և ֆինանսական միջոցների առկայության պարագայում, ընտրված մասնակցի հետ պետք է կնքվեր համաձայնագիր, իսկ մասնակիցը համաձայնագրի նախագիծը ստանալուց հետո 15-օրյա ժամկետ ունի այն ստորագրելու և պատվիրատուին ներկայացնելու համար: Սրան հավելենք նաև, որ հրավերով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրացույցային օրը, այսինքն ստացվում է, որ ապրանքները չեն կարող մատակարարվել ավելի շուտ, քան 22.04.2026թ.՝ վերոնշյալ նորմը ուժի մեջ մտնելուց 53 օր հետո:

Այսինքն, նախատեսված ժամկետներից ավելի ուշ ապրանքների մատակարարումը Պատասխանողի կողմից դրսևորված անփութության հետևանք է, իսկ Հայցվորը բացառապես իր իրավունքներն է պաշտպանում:

Նման պայմաններում Պատասխանողի կողմից ավելորդ շտապողականության դրսևորումը միայն ավելի է հաստատում մեր այն պնդումը, որ սույն ընթացակարգը կազմակերպվել է միայն մեկ մասնակցի համար, որի հետ Պատասխանողը նախնական համաձայնություն է ձեռք բերել ապրանքների մատակարարման համար, ինչով էլ պայմանավորված է Պատասխանողի կողմից նման շտապողականության դրսևորումը՝ վերոնշյալ միջնորդության ներկայացման տեսքով:

Քննարկվող միջնորդության բավարարումը ավելորդ բարդություններ կառաջացնի ինչպես Հայցվորի, այնպես էլ սույն ընթացակարգի շարունակման պարագայում ընտրված մասնակից ճանաչված ընկերության համար, քանզի նման պարագայում մեր կողմից ներկայացված հայցի բավարարման դեպքում ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ևս վերացվելու է, իսկ ընտրված մասնակցի կողմից վճարված ապահովումները կորսվելու են:

Արդյունքում ոչ միայն ավելորդ քաշքշուկ է առաջանալու արդեն իսկ սկսված գործարքի չեղարկման և կատարված վճարումների մասով, այլ նաև էլ ավելի է երկարաձգվելու սույն ընթացակարգով ապրանքների ձեռքբերման գործընթացը: Հավելենք նաև, որ գնման գործընթացների բնականոն ընթացքը չխախտելու համար օրենսդիրը արդեն իսկ սահմանել է մեխանիզմներ: Մասնավորապես նման մեխանիզմ է հանդիսանում գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված վեճերը հատուկ հայցային վարույթով, խիստ սեղմ ժամկետներում քննելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրվել է միջնորդությունը մերժել:

Դատարանը, քննության առարկա դարձնելով միջնորդությունն, արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6–րդ հոդվածի 5–րդ մասի հաաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերը նշված իրավանորմերից հետևում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը լիազորված մարմինն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը, իսկ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների՝ բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների, բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը: Միաժամանակ այն դեպքում, երբ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահից ելնելով՝ անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, ապա Դատարանը կողմի գրավոր միջնորդության հիման վրա, կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

Դատարանը կարևորում է նաև այն, որ անդրադառնալով համաչափության պահանջին, այլ կերպ ասած՝ այն հարցին, թե արդյո՞ք նշված սահմանափակումը պիտանի և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Ըստ այդմ, համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Այսինքն՝ գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի,

անհրաժեշտ և չափավոր:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի՝ հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից պետությունը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.11.2015թ. որոշում):

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանն անդրադառնալով միջնորդությանը, ցանկանում է նշել, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից թիվ <<ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026>> ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ՆԳՆ կարիքների համար էլեկտրոնային ձեռնաշղթաների ձեռքբերման նպատակով:

Միաժամանակ, <<Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշումն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների կիրառմամբ կայացված *անհետաձգելի միջամտության որոշումների կատարումն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ:* Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ փաստորեն, գնման գործընթացի կասեցման արդյունքում՝ հնարավոր չի լինի անհետաձգելի միջամտության որոշումների կատարումն ապահովելիս՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների կողմից օգտագործել էլեկտրոնային հսկողության միջոցներ:

Միաժամանակ, ելնելով <<Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին>> ՀՀ օրենքով հետապնդվող նպատակից և բովանդակությունից հարկ է նշել, որ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումն անհրաժեշտ է ընտանիքում բռնության հնարավոր դեպքերի նվազեցման, բռնության կրկնման կանխման նպատակով, ինչի վերաբերյալ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացրած հիմնավորումներից պարզ է դառնում, որ բռնության ենթարկված անձանց շրջանում մեծ թիվ են կազմում կանայք ու երեխաները, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունն ունի վերջիններիս կյանքի, առողջության և իրավունքների պաշտպանությունն ապահովելու պարտականություն:

Դատարանը կարևորում է նաև այն, որ ցանկացած պարագայում երեխայի լավագույն շահերը պետք է ուշադրության արժանանան առաջնահերթության սկզբունքով:

Արդյունքում Դատարանն արձանագրում է, որ հասարակության նշված շրջանակներն ընդգրկող անձանց իրավունքների պաշտպանությունն իրավակիրառ պրակտիկայում իրականացնելու տեսանկյունից՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների կողմից իրականացվող գործողությունների, պարտականությունների պատշաճ իրականացումը կենսական նշանակություն ունի նշված անձնաց կյանքի, առողջության և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար, ինչպես նաև այն, որ նման պաշտպանության իրականացման անհրաժեշտությունը կարող է առաջանալ ցանկացած ընտանիքում, ցանկացած պահի, ուստի նշված իրավասությունների ոչ ամբողջական (թերի) իրականացումը չի բխի հանրային շահից, հետևաբար, ելնելով հանրային շահից պետք է վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ ապահովելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների արդյունավետ աշխատանքը՝ ի նպաստ հասարակության անվտանգության և հանրության (մարդու) իրավունքների պաշտպանության:

Ինչ վերաբերում է հայցվոր կողմի դիտարկումներին, ապա Դատարանը ցանկանում է նշել, որ կասեցումը չվերացնելու դեպքում գնման գործընթացքում իրականացման ենթակա գործողություններն առավել ձգձգվելու են, իսկ ինչ վերաբերում է հետագային վերաբերող քաշքշուքների վերաբերյալ նշումներին, ապա դրանք դուրս են քննվող վեճի շրջանակներից, ուստի որևէ նշանակություն ունենալ չեն կարող միջնորդության լուծման տեսանկյունից:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ քննարկվող միջնորդությունը ենթակա է բավարարման:

Արդյունքում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ հոդվածներով՝ Դատարան

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ ներքին գործերի նախարարի միջնորդությունը, բավարարել:

Վերացնել թիվ <<ՀՀ ՆԳՆ ՀԲՄԱՊՁԲ-Ա-26/2026>> ծածկագրով գնման գործընթացի՝ օրենքի ուժով առաջացած կասեցումը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.03.12 13:25:08 AMT